# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2020 թ. N 32-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 26-ի նիստի հետևյալ ***օ ր ա կ ա ր գ ը.***

1.1. Ջերմուկ համայնքի 2019 թվականի հաշվապահական հաշվեկշիռը և համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.2. Ջերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի առաջին եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.3. Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.4. Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.5. «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների և դրանց դիմաց գանձվող վճարի դրույքաչափերի մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.6. ՀՀ Ոստիկանության Պետական պահպանության գլխավոր վարչության Եղեգնաձորի պահպանության բաժնին անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.7. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի N 4-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.8. Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 16-ի N 16-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.9. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականության հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.10. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը հավանություն տալու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.11. Դրամական հատկացումներ կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.12. «Կարմրաշեն համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին դրամական հատկացում կատարելու մասին.

*զեկ. Կարմրաշեն գյուղի վարչական ղեկավար Ռ. Առաքելյան*

1.13. «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը Ջերմուկ համայնքի միանալուն համաձայնություն տալու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ս. Վարդանյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գառզյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ……6……. դեմ-……0…… ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2020 թ. N 33-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 32-րդ ենթակետին համապատասխան ավագանին որոշում է

1. Հաստատել Ջերմուկ համայնքի 2019 թվականի հաշվապահական հաշվեկշիռը և գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն NN 1-4 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [illegible] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [illegible] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [illegible] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | [illegible] | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | [illegible] | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | բացակա | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | բացակա | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | [illegible] | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | բացակա | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ……6…… դեմ-……0…… ձեռնպահ- ……0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 26

Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2020 թ. N 34-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ ավագանին որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն Ջերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի առաջին եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | բացակա | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ-……6…. դեմ-…0……. ձեռնպահ- …0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2020 թ. N 35-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ղեկավարի՝ համայնքի 2020 թվականի բյուջեի վարչական մասի հետևյալ փոփոխությունների մասին առաջարկությունը. համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002- «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891» (պահուստային միջոցներ) տնտեսագիտական հոդվածը նվազեցնել 25081,5 հազար ՀՀ դրամով, որից ՝

1.1. 19687,5 հազար ՀՀ դրամն ուղղել բյուջեի՝ բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 51, 210002- «օրենսդիր, գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4851 (կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների և վնասների վերամանգնում) տնտեսագիտական հոդվածին՝ ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից 2019 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզում իրականացված 2013-2016 թվականների համար «Պետական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին» ծրագրերի շրջանակներում ստուգումների և արդյունքում արձանագրված ավել փոխանցված գումարների հետ վերադարձմանը.

Ջերմուկ համայնքապետարան– 2016 թվականի համար՝ 17718.7 հազար ՀՀ դրամ

Հերիերի գյուղապետարան - 2016 թվականի համար՝ 968.9 հազար ՀՀ դրամ

Գնդեվազի գյուղապետարան - 2016 թվականի համար՝ 999.9 հազար ՀՀ դրամ

1.2. 5394,0 հազար ՀՀ դրամն ուղղել բյուջեի՝ բաժին 04, խումբ 02, դաս 01, ծրագիր 55 «210002–Գյուղատնտեսություն» գործառնական նշանակության ծախսերի կատարման

նախահաշվի 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) տնտեսագիտական հոդվածին՝ Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղում գործող «Կարմրաշեն համայնքի արտադրագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին դրամական հատկացում կատարելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կալենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | բացակա | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | բացակա | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | բացակա | | |

Որոշումն ընդունված է կողմ- 6 դեմ- 0 ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 26
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2020 թ. N 36-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ իրավիճակով պայմանավորված և Ջերմուկ համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների՝ ս/թ մարտի 17–ից հունիսի 13–ը ժամանակահատվածում աշխատանքների և նրանց կողմից մատուցվող ծառայությունների դադարեցման հետ կապված հաստատել համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17 -ի N 8-Ն որոշմամբ հաստատված Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները՝

1.1. Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեի վարչական մասի «46-07-00» , «46-08-00» , «46-05-00- տեղական վճարներ»/ ՀՈԱԿ-ների կողմից ծառայությունների մատուցման համար վճարվող տեղական վճարներ/ և «28-50-00-համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտներ» /Ջերմուկ համայնքի ճոպանուղի համայնքային հիմնարկի ծառայություններից եկամուտ/, «45-01-00» տեղական տուրքեր եկամտային հոդվածները պակասեցնել 9458.1 հազար ՀՀ դրամով՝ հաշվի առնելով երեխաների ցուցակային թիվը և հաճախումների պայմանագրային հաշվարկները, տնտեսվարողների հետ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրային պարտավորությունների ժամանակավոր դադարեցումը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ճոպանուղու կողմից փաստացի մուտքագրված գումարների, տեղական տուրքերի վճարների չափերը, որից՝

ա/ «Ջատիկ մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ից՝ 3505.935 հազար ՀՀ դրամ

բ/ «Գնդեվազի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ից՝ 395.96 հազար ՀՀ դրամ

գ/ «Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ–ից՝ 660.0 հազար ՀՀ դրամ

դ/ «Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ից՝ 1723.5 հազար ՀՀ դրամ

ե/ «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ից՝ 2007.825 հազար ՀՀ դրամ

զ/ «Ջերմուկ համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկից՝ 514.5 հազար ՀՀ դրամ

է/ «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի «46-08-00- տեղական վճար» եկամտատեսակը ամբողջությամբ պակասեցնել 317.13 հազար ՀՀ դրամով՝ ֆուտբոլի մարզումների դասաժամերը անվճար դարձնելու հետ կապված:

ը/ «տեղական տուրք «45-06-00-ոգելից խմիչքների» և «45-08-00-ծխախոտի վաճառքի» ու «45-16-00-հանրային սննդի կազմակերպման և իրականացման» թույլտվության իրականացման համար» հոդվածից՝ 333.25 հազար դրամ:

1.2 Համապատասխանաբար պակասեցնել Ջերմուկի համայնքապետարանի և նրա ենթակառուցվածքների հետ կնքված սուբսիդիաների հատկացման պայմանագրերի «4511-սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածը՝ 8943.6 հազար ՀՀ դրամով, և Ջերմուկ համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկի ծախսերի կատարման նախահաշվի շարունակական ծախսերը՝ 514.5 հազար ՀՀ դրամով, որից

ա/ էներգետիկ ծառայություններ՝ 214.5 հազար ՀՀ դրամ

բ/ կոմունալ ծառայություններ՝ 100.0 հազար ՀՀ դրամ

գ/ տեղեկատվական ծառայությունները՝ 200.0 հազար ՀՀ դրամ

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունները հաշվի առնելով՝ ի գիտություն ընդունել Ջերմուկ համայնքի վարչական բյուջեն՝ 2020 թվականի մայիսի 26-ի դրությամբ՝ *եկամուտներ՝ 529376.9 հազար ՀՀ դրամ*

*ծախսեր՝ 529376.9 հազար ՀՀ դրամ:*

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կռլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | բացակա | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | բացակա | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | բացակա | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ……6…… դեմ-……0…… ձեռնպահ-…0…

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 26
Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2020 թ. N 37-Ա

## «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետին և «Տեղական տուրքերի ու վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետին, 13-րդ հոդվածի 2-րդ մասին և 14-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետին համապատասխան՝ ավագանին որոշում է՝

1. «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից կողմից մատուցած ֆուտբոլային մարզումների համար համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի N 6-Ն որոշմամբ սահմանված փոխհատուցման գումարը չեղարկել՝ ՀՈԱԿ-ում գործող ֆուտբոլի խմբակը դարձնելով անվճար:

2. Հաշվի առնելով «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից նոր՝ ֆիթնես-մարզումների ծառայությունների մատուցումը՝ դրա դիմաց սահմանել տեղական վճար՝ անհատական մարզումների մեկ ժամը՝ 500 (հինգ հարյուր) դրամ, մարզիչի հետ մարզումների 12 պարապմունքը՝ 10 000 դրամ դրույքաչափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի հունիսի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բագրատյան Արտակ Կալենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է կողմ-……6…… դեմ-……0…… ձեռնպահ- …0…

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 26
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2020 թ. N 38-Ա

### ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ավագանին որոշում է՝

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի N 8 հասցեում գտնվող Ջերմուկի համայնքապետարանի վարչական շենքի 47,9 քմ տարածքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՀ Ոստիկանության Պետական պահպանության գլխավոր վարչության Եղեգնաձորի բաժնին՝ ծառայություն իրականացնելու նպատակով: Տարածքի օգտագործման իրավունքի ժամկետը՝ 5 (հինգ) տարի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ-……6…… դեմ-……0…… ձեռնպահ-…0…

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2020 թ. N 39-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը և նույն հոդվածի 3-րդ մասը՝ ավագանին որոշում է՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի «Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների 2020 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 4-Ա որոշմամբ հաստատված հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

ա) հավելված 2-ում 23-րդ տողի «Դրույքի չափը (դրամ)» և «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակներում «130 000» թիվը փոխարինել «187 300» թվով,

բ) հավելված 1-ում կատարել լրացում՝ «Տեխնիկական սպասարկման անձնակազմ-14» տողից առաջ ավելացնել «Քաղաքացիական աշխատանք կատարողներ-1» արտահայտությունը, իսկ «Ընդամենը՝ թվաքանակ- 37» արտահայտության մեջ «37» թիվը փոխարինել «38» թվով:

բ) հավելված 2-ում 19-րդ տողից հետո ավելացնել նոր տող՝ հետևյալ բովանդակությամբ՝

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| հողաշինարար | 1 | 238 200 | 238 200» |

գ) հավելված 2-ում՝ «Ընդամենը» տողի 2-րդ սյունակում «35,5» թիվը փոխարինել «36,5» թվով, 3-րդ սյունակում «4 059 511» թիվը փոխարինել «4 355 011» թվով, 4-րդ սյունակում «6 299 201» թիվը փոխարինել «6 594 701» թվով:

դ) «Ընդհանուրը» տողի 2-րդ սյունակում «43,5» թիվը փոխարինել «44,5» թվով, 3-րդ սյունակում «5625473» թիվը փոխարինել «5920973» թվով, 4-րդ սյունակում «8658963» թիվը փոխարինել «8954463» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կաղենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......6...... դեմ-.....0..... ձեռնպահ- ..0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 26
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2020 թ. N 40-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ավագանին որոշում է՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 16-ի «Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները վարձակալությամբ տրամադրելու և ամսական վարձավճարի չափն ու պայմանները հաստատելու մասին» N 16-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

ա) որոշման վերնագրում «ԸՆԴԳՐԿՎԱԾ » բառից հետո ավելացնել «ՊԵՏԱԿԱՆ ԵՎ» բառերը,

բ) որոշման 1-ին կետում «համայնքային» բառից հետո ավելացնել «և մինչև 10 000 (տաս հազար) հա մակերեսով պետական» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | Բաբայան | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | Բաբայան | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ-……6…… դեմ-……0…… ձեռնպահ-……

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 26
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2020 թ. N 41-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ,ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67–րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝ ավագանին որոշում է՝

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող հետևյալ հողամասերը աճուրդով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը և մեկնարկային գինը համաձայն աղյուսակի՝

| հողամասի օտարման նպատակը | հողամասի գտնվելու վայրը | Մակերեսը քմ, | մեկնարկային գինը, դրամ | Հողամասի ծածկագիրը | նպատակային նշանակությունը | գործառնական նշանակությունը կամ հողատեսքը |
|---|---|---|---|---|---|---|
| Գյուղատնտեսական գործունեության համար | գ.Գնդեվազ | 2835,2 | 50 000 | 10-016-0208-0103 | գյուղատնտեսական | արոտավայր |
| Գյուղատնտեսական գործունեության համար | գ. Կեչուտ | 3579,8 | 50 000 | 10-002-0445- | գյուղատնտեսական | այլ հողատեսք |
| Գյուղատնտեսական գործունեության համար | գ. Կեչուտ | 3296,7 | 50 000 | 10-002-0445 | գյուղատնտեսական | այլ հողատեսք |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կաղլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ-……6…… դեմ-……0…… ձեռնպահ-0…

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 26

Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2020 թ. N 42-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշման՝ ավագանին որոշում է՝

1. Հավանություն տալ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը. համայնքին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասը (հողատեսքը՝ այլ, մակերեսը՝ 0,03376 հա, կադաստրային ծածկագիրը՝ 10-028-0174-0015) փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նշանակության հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կաղլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Միխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ-.....6....... դեմ-.....0...... ձեռնպահ- ....0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 26
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2020 թ. N 43-Ա

### ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշմամբ հաստատված կարգը և հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչների դիմումները և դրանց հիման վրա համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (սոցիալական աշխատող) կողմից կազմված սոցիալական դեպքի վարման գործերը՝ ավագանին որոշում է՝

1. Ջերմուկի համայնքի 2020 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից 150 000-ական (հարյուր հիսուն հազարական) դրամ ֆինանսական օգնություններ տրամադրել համայնքի հետևյալ բնակիչներին՝ Ալեքսանյան Հրանտ, Ղամբարյան Վերջանուշ, Հովհաննիսյան Լիդա, Բագրատյան Համլետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | [signature] | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | [signature] | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ……6…… դեմ-……0…… ձեռնպահ- ……0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 26

Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2020 թ. N 44-Ա

### «ԿԱՐՄՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով՝ ավագանին որոշում է՝

1. Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող և ՀՀ էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ծրագրերի իրականացման վարչության (նախկինում՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ԳԾԻԳ պետական հիմնարկ) կողմից իրականացվող ՀԳՌԿՄ–2՝ Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի շրջանակներում 2016 թվականի ապրիլին կնքված եռակողմ համաձայնագրի շրջանակներում գնման ենթակա տեխնիկաներն ու սարքավորումները ձեռք բերելու համար Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղի «Կարմրաշեն համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին հատկացնել 5 394 000 դրամ (հինգ միլիոն երեք հարյուր իննսունչորս հազար) դրամ՝ համաֆինանսավորման ընդհանուր գումարի մի մասը հատուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | [signature] | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | [signature] | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...6... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 26
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2020 թ. N 45-Ա

«ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԱՆԱԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի՝ այլ միջոցների ներգրավմամբ Ջերմուկ համայնքում կայուն զարգացում ապահովելու նպատակով ծրագրերի մշակման և իրականացման առաջարկությունը՝ ավագանին որոշում է՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի ղեկավարի՝ ԵՄ կողմից ֆինանսավորվող «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը միանալու, ծրագրի անդամակցության հայտը ստորագրելու և գործընկերների հետ «Տեղական տնտեսական զարգացման պլանի» մշակման ու իրականացման վերաբերյալ առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ-.............6..... դեմ-.........0..... ձեռնպահ-....0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 26

Ջերմուկ